ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 22-Ն

07 օգոստոսի 2015թվական գ. Անուշավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 45-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական համայնքի 2015թվականի բյուջեի հաստատման մասին» թիվ 45-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թվականի հուլիսի 2-ի թիվ 766-Ն որոշմամբ նախատեսված 2015թվականի հունիսի 8-9-ի Անուշավան համայնքի քամուց տուժած ընտանիքներին աջակցություն ցուցաբերելու նպատակով:

1. Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին> հոդվածով եկամտային հոդվածի 0 /զրո/ թիվը փոխարինել 2 800 000 /երկու միլիոն ութ հարյուր հազար/ թվով:
2. Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ ծախսային հոդվածի 0/զրո/ թիվը փոխարինել 2 800 000 /երկու միլիոն ութ հարյուր հազար/ թվով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թվականի հուլիսի 2-ի թիվ 766-Ն որոշմամբ նախատեսված Անուշավան համայնքի համար հակակարկտային կայանի ձեռք բերման և Անուշավանի մանկապարտեզի սանիտարահիգենիկ վիճակի բարելավման նպատակով

3. Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <կապիտալ սուբվենցիաներ համայնքներին> հոդվածով եկամտային հոդվածի 0/զրո/ թիվը փոխարինել 4400 000 /չորս միլիոն չորս հարյուր հազար/ թվով:
4. Գյուղատնտեսություն՝ 5129 հոդվածի 0/զրո/թիվը փոխարինել 6 000 000/վեց միլիոն/ թվով:
5. Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն՝ 5129 հոդվածի 0/զրո/ թիվը փոխարինել 400 000/չորս հարյուր հազար/ թվով:

6. Անուշավանի պահուստային ֆոնդ՝ 4891 հոդված՝ 1701900/մեկ միլիոն յոթ հարյուր մեկ հազար ինը հարյուր/ թիվը փոխարինել 1621900 /մեկ միլիոն վեց հարյուր քսանմեկ հազար ինը հարյուր/ թվով:
7. Անուշավանի ճանապարհային տրանսպորտ՝ 1 743 100 / մեկ միլիոն յոթ հարյուր քառասուներեք հազար մեկ հարյուր/ թիվը փոխարինել 0 /զրո/ թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ձեռնպահ-0 Կողմ-5 Դեմ-0

Ռ. Հարությունյան կողմ ----------

Ղ. Ղահրամանյան կողմ ----------

Գ. Վարդանյան կողմ ----------

Ա. Կարոյան կողմ ----------

Մ. Մովսիսյան կողմ ----------

Անուշավան համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

07 օգոստոսի 2015թվականն
գ. Անուշավան